

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ**

Համայնքի 2018 թվականի

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմել է՝ համայնքի ղեկավար Լևոն Զավարյանը

**Հաստատվել է՝ համայնքի ավագանու 26 դեկտեմբերի 2017թ-ի թիվ 50-Ա որոշմամբ
(նիստի ամսաթիվը)**

ԹՈՒՄԱՆՅԱՆ 2017թ.

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ-----	3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ և ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ-----	3
2. ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ) -----	7
3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2018Թ. ԾՐԱԳԻՐԸ -----	23
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ -----	30
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ -----	32

Ներածություն

Թումանյան համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանի (SUՊ-ի) մշակման հիմնական նպատակն է՝ ապահովել համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (ՀՀԶԾ-ով) սահմանված համայնքի տեսլականի, ռազմավարության, ոլորտային նպատակների և ծրագրերի իրագործումը:

SUՊ – ի մշակման մեթոդական հիմք է հանդիսացել «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի փորձագետների կողմից 2017 թվականին պատրաստված «Համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման» մեթոդական ուղեցույցը:

SUՊ-ի 1-ին բաժնում ներկայացված են՝ համայնքի տեսլականը, համայնքի կայուն զարգացման ցուցանիշները (**Աղյուսակ 1**), ոլորտային նպատակները (**Աղյուսակ 2**):

SUՊ-ի 2-րդ բաժնում բերված են համայնքի 2018 թվականի համապատասխան ֆինանսական միջոցներով ապահովված ծրագրերը (**Աղյուսակ 3**) և այդ ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (**Աղյուսակ 5**), ինչպես նաև այն ծրագրերը, որոնք դեռևս ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով (**Աղյուսակ 4**):

SUՊ-ի 3-րդ բաժնում ներկայացված է՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման 2018 թվականի ծրագիրը (**Աղյուսակ 6**):

SUՊ-ի 4-րդ բաժնում բերված է SUՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (**Աղյուսակ 7**):

SUՊ-ի 5-րդ բաժնում (**Աղյուսակ 8**) ներկայացված է՝ տեղեկատվություն SUՊ-ում ներառված յուրաքանչյուր ոլորտային ծրագրի իրականացման արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ:

1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

Ըստ համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 56 որոշմամբ հաստատված ՀՀԶԾ-ի՝ համայնքի տեսլականն է՝ **Թումանյան համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության, հատապտուղների վերամշակման, մաքուր, բարեկարգ, առևտրի և սպասարկման, կրթական և մշակութային զարգացած ենթակառուցվածքներ, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ տարածք:**

Ստորև ներկայացված են համայնքի կայուն զարգացման ցուցանիշները: Ցուցանիշի ելակետային արժեքը՝ համապատասխան ցուցանիշի 2017 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ ֆիքսված արժեքին 2017 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կանխատեսվող ցուցանիշի ավելացումն է, հաշվի առնելով համայնքում առկա զարգացումները և միտումները, ինչպես նաև նախորդ տարիների փորձը: Ցուցանիշի թիրախային արժեքը՝ համապատասխան ցուցանիշի պլանավորվող արժեքն է, այսինքն՝ այն արժեքը, որին կհասնի համայնքը 2018 թվականին SUՊ-ը հաջողությամբ իրականացնելու դեպքում:

SUՊ-ում ոլորտների և ծրագրերի ազդեցության վերջնական արդյունքի որոշ որակական ցուցանիշների գնահատման համար կիրառվել է 10 բալանոց սանդղակ՝ 1- շատ վատ, 2 – վատ, 3 – բավականին վատ, 4 – ավելի շատ վատ, քան լավ, 5 – միջին՝ ոչ լավ. ոչ վատ, 6 - ավելի շատ լավ, քան վատ, 7 – բավականին լավ, 8 – լավ, 9 – շատ լավ, 10 – կատարյալ:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	22,3	23,1
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	4644	4750
Համայնքում տարվա ընթացքում ներդրումների ծավալը (հազ. դրամ)	23000,0	47000,0
Համայնքում գործող ՓՄՁ-ների քանակը և դրանցում աշխատատեղերի թիվը (հատ)	22/85	23/88

Ստորև սահմանված են համայնքի ոլորտային նպատակները՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների առանձին բնագավառների (ոլորտների):

Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Ոլորտ 1. Ընդհանուր			
Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը հանրային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի, աշխատակազմի, ՀՈԱԿ-ների գործունեությունից, մատուցված հանրային ծառայություններից	միջին՝ ոչ լավ, ոչ վատ	ավելի շատ լավ, քան վատ
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, %	22,3	23,1
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
Բարելավել քաղաքաշինության և կոմունալ ծառայության բնագավառում համայնքի	Գիշերային լուսավորված փողոցների թվի	20	23

բնակչությանը հանրային ծառայությունների մատուցումը և որակը:	տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, %		
	Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից (հարցումների հիման վրա)	բավականին վատ	ավելի շատ վատ, քան լավ
	Խմելու ջրի ջրամատակարարման մատուցման մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)	ավելի շատ վատ, քան լավ	միջին՝ ոչ լավ, ոչ վատ
Ոլորտ 5. Հողօգտագործում			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 6. Տրանսպորտ			
Բարձրացնել համայնքային ենթակայության ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակը և ապահովել ճանապարհային անվտանգ երթևեկությունը:	Համայնքային ենթակայության ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)	ավելի շատ վատ, քան լավ	միջին՝ ոչ լավ, ոչ վատ
	Ասֆալտապատված ներհամայնքային ճանապարհների և փողոցների մակերեսը, ք.մ	17100	17170
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ			
Խթանել համայնքում գործարար միջավայրի բարելավումը ու զարգացումը:	Համայնքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների (ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների) թիվը	22	23
Ոլորտ 8. Կրթություն			

Բարձրացնել համայնքում կրթության որակը և մատչելիությունը:	ՏԻՄ-երի, կրթական հաստատությունների գործունեությունից, մատուցված ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)	բավականին լավ	լավ
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 10. Առողջապահություն			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն			
Ապահովել սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և մատչելիությունը:	Սոցիալական ծրագրի առկայությունը, այո/ոչ	այո	այո
	Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից	ավելի շատ վատ, քան լավ	միջին՝ ոչ լավ, ոչ վատ
Ոլորտ 13. Գյուղատնտեսություն			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 14. Անասնաբուծություն և բուսասանիտարիա			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն			
Ապահովել համայնքի բոլոր բնակավայրերում բնակչությանը աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը և շրջակա միջավայրի մաքրությունը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցված աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններից	ավելի շատ վատ, քան լավ	ավելի շատ լավ, քան վատ

	(հարցումների հիման վրա)		
	Տեղափոխված աղբի ծավալը, տոննա	146,0	225,0
Ոլորտ 16. Զբոսաշրջություն			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:			

2. Համայնքի 2018 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով:

Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Բնակավայր(եր)ը
Ոլորտ 1. Ընդհանուր			
1.	Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում	59655,0	Բոլոր բնակավայրերում
2.	Համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում	2000,0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		61655,0	
Ոլորտ 4.Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
1.	Թումանյան քաղաքի հրապարակի բարեկարգում և ջրավազանի վերանորոգում	800,0	ք. Թումանյան
2.	Համայնքի գյուղական բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի ընթացիկ նորոգում	1500,0	գ.Ահնիձոր, գ.Աթան, գ.Լորուտ, գ.Մարց, գ.Քարինջ, գ.Շամուտ
3.	Թումանյան քաղաքի և Մարցի փողոցների արտաքին լուսավորության համակարգերի ընդլայնում, հենասյուների ներկում	550,0	ք. Թումանյան, գ. Մարց
Ընդամենը		2850,0	
Ոլորտ 6. Տրանսպորտ			
1.	Ահնիձորից և Աթանից արոտավայրեր տանող հանդամիջյան ճանապարհների նորոգում	500,0	գ.Ահնիձոր, գ. Աթան
2.	Թումանյան քաղաքի փողոցների բարեկարգում և ասֆալտապատում	1300,0	ք. Թումանյան
Ընդամենը		1800,0	
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ			

1.	Կանգառ-շուկայի կառուցում	23000,0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		23000,0	
Ոլորտ 8.Կրթություն			
1.	Համայնքում նախադպրոցական կրթության ծառայության մատուցում	22500,0	Բոլոր բնակավայրերում
2.	Քարինջի մանկապարտեզի շենքի ջեռուցման համակարգի անցկացում	2500,0	գ.Քարինջ
3.	Համայնքում արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցում	5800,0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		30800,0	
Ոլորտ 12.Սոցիալական պաշտպանություն			
1.	Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին	2000,0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		2000,0	
Ոլորտ 15.Շրջակա միջավայրի պահպանություն			
1.	Համայնքի բոլոր բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում	17000,0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		17000,0	
Ընդհանուրը		139105,0	

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով:

Աղյուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Բնակավայր(եր)ը
Ոլորտ 8.Կրթություն			
1.	Քարինջի միջնակարգ դպրոցի շենքի ընթացիկ նորոգում, ներքին հարդարում, դուռ-պատուհանների, սանհանգույցների փոխարինում և ջեռուցման համակարգի անցկացում	6000.0	գ.Քարինջ
Ընդամենը		6000.0	
Ոլորտ 9.Սշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
1.	Լորուտի դպրոցի ուսուցչի տան մարզադահլիճի և խաղասենյակի վերակառուցում	15000.0	գ.Լորուտ
Ընդամենը		15000.0	
Ոլորտ 11.Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
1.	Աթանի դպրոցի մարզահրապարակի կառուցում, դպրոցի տանիքի վերանորոգում	2500.0	գ.Աթան
Ընդամենը		2500.0	
Ընդհանուրը		23500,0	

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների:

Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
Ոլորտ 1. Ընդհանուր					
Ոլորտային նպատակ . Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը հանրային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1. Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի, աշխատակազմի, ՀՈԱԿ-ների գործունեությունից, մատուցված հանրային ծառայություններից - ավելի շատ լավ, քան վատ 2. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում՝ 23,1%			
Ծրագիր 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում Բնակավայրերը՝ Թումանյան, Աթան, Ահնիձոր, Լորուտ, Մարց, Քարինջ, Շամուտ					
Ծրագրի նպատակ. Ապահովել աշխատակազմի բնականոն գործունեությունը, բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը և մատչելիությունը:	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Աշխատակազմը բնականոն գործել է, բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը - ավելի շատ լավ, քան վատ	Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, վարչական ղեկավարներ	2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1. Ապահովվել է աշխատակազմի բնականոն գործունեությունը:	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1 ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների իրազեկվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - բավականին լավ 2.ՏԻՄ-երի կողմից մատուցված համայնքային (հանրային, ոչ վարչական բնույթի) ծառայությունների թիվը - 3 3.Անշարժ գույքի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում - 3%-ով 4.Համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում - 248 օր	Տեղեկատվական աղբյուրներ. Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, վարչական ղեկավարներ	2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել
Միջոցառումներ (գործողություններ) . 1. Աշխատակազմի պահպանություն		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանման ծախսեր՝			

<p>2. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգերի սպասարկում</p> <p>3. Համայնքի անշարժ գույքի կառավարում</p> <p>4. Համայնքապետարանի և վարչական ղեկավարների նստավայրերի շենքերի և գույքի ընթացիկ նորոգում</p>	<p>59655, 0 հազ.դրամ</p> <p>2. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատողներ՝ 28</p> <p>3. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգեր՝ 2</p> <p>4. Համայնքապետարանի վարչական շենք և գույք</p> <p>5. Վարչական ղեկավարների նստավայրերի շենքեր և գույք</p> <p>Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ</p>				
<p>Միջանկյալ արդյունք 2. Բարձրացել է համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</p> <p>1. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման փաստացի գումարների տարեկան աճ- 5 %-ով</p> <p>2. Հարկային պարտականությունները չկատարողների նկատմամբ համայնքի կողմից դատարան ներկայացված հայցադիմումների թիվը- 5</p> <p>3. Հողի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում- 3 %-ով</p> <p>4. Գույքահարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում -3 %-ով</p> <p>5. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով առկա ապառքների նվազեցում- 7%-ով</p>	<p>Տեղեկատվական աղբյուրներ</p> <p>Օրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Աշխատակազմի գլխավոր մասնագետ- հաշվապահ, վարչական ղեկավարներ, երկրորդ կարգի մասնագետներ</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել</p>
<p>Միջոցառումներ (գործողություններ) .</p> <p>1. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրմամբ զբաղվող աշխատակիցների վերապատրաստումներ</p> <p>2. Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների բազաների ճշտում, հարկատուների ծանուցում</p> <p>3. Ապառքներ ունեցող հարկատուների հետ բացատրական աշխատանքների իրականացում, պարտականությունները չկատարողների նկատմամբ դատարան կամ ԴԱՀԿ հայցադիմումների ներկայացում</p>		<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</p> <p>1. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրմամբ զբաղվող աշխատակիցներ՝ 9</p> <p>2. Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների բազաներ՝ առկա է</p> <p>3. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով առկա ապառքներ 14091,0 հազ.դրամ</p>			
<p>Միջանկյալ արդյունք 3. Բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</p> <p>1. Համայնքապետարանում բնակիչների սպասարկման «մեկ պատուհան» սկզբունքի կիրառումը- կիրառվում է</p> <p>2. Սպասարկման կենտրոն դիմած այցելուների թիվը - 645</p> <p>3. ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքից, մատուցված</p>	<p>Տեղեկատվական աղբյուրներ</p> <p>Օրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ, աշխատակազմի քարտուղար, ՀՈԱԿ-ների տնօրեններ, վարչական ղեկավարներ</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան ենթակառուցվածքների և մասնագետների առկայությունը</p>

	<p>ծառայությունների մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - ավելի շատ լավ, քան վատ</p> <p>4. ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացված դիմում-բողոքների թվի նվազում - 5 %-ով</p> <p>5. Համայնքի ղեկավարի, ավագանու կողմից կազմակերպվող բնակիչների ընդունելությունների հաճախականությունը - շաբաթը 1 անգամ</p> <p>6. Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը – 2 օր</p>				
--	---	--	--	--	--

<p>Միջոցառումներ (գործողություններ) .</p> <ol style="list-style-type: none"> 1. Աշխատակազմի աշխատողների արդյունավետ և թափանցիկ գործունեության ապահովում 2. Համայնքի ֆինանսական թափանցիկ և արդյունավետ կառավարում 3. Համայնքի գույքի կառավարման բարելավում 4. Աշխատակազմում գործող տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի գործունակ աշխատանքային վիճակի պահպանում և շահագործում 5. Աշխատակազմի աշխատակիցների և վարչական ղեկավարների աշխատանքային պայմանների բարելավում 6. Համացանցային կայքում առկա տեղեկատվության պարբերական թարմացում 	<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</p> <ol style="list-style-type: none"> 1. Աշխատակազմում առկա համակարգչային սարքեր և սարքավորումներ - 44 2. Տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգեր – առկա է 3. Աշխատակազմում ֆինանսական (այդ թվում՝ գույքի) կառավարման հարցերով զբաղվող աշխատողներ -2 4. Աշխատակազմում տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի կառավարման հարցերով զբաղվող աշխատողներ -1 5. ՏԻ-անը բնակիչների մասնակցության կարգեր -3 6. Համայնքի պաշտոնական համացանցային կայք –առկա է
---	--

Ծրագիր 2. Համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում
Բնակավայրերը՝ Թումանյան, Աթան, Ահնիձոր, Լորուտ, Մարց, Քարինջ, Շամուտ

<p>Ծրագրի նպատակ. Հզորացնել համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունները</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Աշխատակազմի կառավարման համակարգերը բարելավվել են, աճել են աշխատակիցների գիտելիքները և հմտությունները, 10 %-ով</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, վարչական ղեկավարներ</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
<p>Միջանկյալ արդյունք 1. Աշխատակազմի աշխատակարգերը և առկա կառավարման (վարչական,</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1. Աշխատակազմի բարելավված աշխատակարգեր և</p>	<p>Տեղեկատվական աղբյուրներ Ծրագրի գնահատման համակարգ,</p>	<p>Աշխատակազմի քարտուղար</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան ենթակառուցվածքների, ֆինանսական ռեսուրսների և մասնագետների</p>

<p>Ֆինանսական, տեղեկատվական, հեռահաղորդակցության և այլն) համակարգերը բարելավվել են</p>	<p>կառավարման համակարգեր – առկա է</p> <p>2.ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացվող դիմում-բողոքների թվի նվազում - 3 %-ով</p> <p>3. Մասնագիտական վերապատրաստում անցած համայնքային ծառայողների թիվը - 5</p> <p>4. Աշխատակազմում կիրառվող տեղեկատվական համակարգերի թիվը - 1</p> <p>5.Աշխատակազմում օգտագործվող համակարգիչների թիվը -23</p> <p>6. ՏԻՄ-երի, աշխատակազմի աշխատակիցների կարծիքը բարելավված կառավարման համակարգերի վերաբերյալ - շատ լավ</p> <p>7.Տարվա ընթացքում բարելավված աշխատակարգերի թիվը -3</p> <p>8. Ծրագրի իրականացման ժամկետը -1 տարի</p>	<p>աշխատակազմ, ՏՀԶՎԿ ՀԿ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակություն, բնակիչներ</p>			<p>առկայությունը</p>
--	--	---	--	--	----------------------

<p>Միջոցառումներ (գործողություններ) .</p> <p>1. ՏԻՄ-երի, աշխատակազմի աշխատողների մասնագիտական վերապատրաստման կազմակերպում</p> <p>2. Համայնքային քաղաքականությունների, ծրագրերի մշակում և կառավարում</p> <p>3.Համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերի խմբագրում</p> <p>4. Աշխատակազմի աշխատակիցներին անհրաժեշտ համապատասխան տեխնիկական և ծրագրային միջոցներով ապահովում</p>	<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</p> <p>1.Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր՝ 2000,0 հազ. դրամ</p> <p>2.Աշխատակազմի վարչական, ֆինանսական, տեղեկատվական, հեռահաղորդակցության և այլ համակարգեր –առկա է</p> <p>3.Աշխատակազմի կառուցվածք և կանոնադրություն –առկա է</p> <p>Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ</p>
---	--

<p>Միջանկյալ արդյունք 2. Աշխատակազմի աշխատակիցների տեխնիկական և մասնագիտական կարողությունները բարձրացել են</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</p> <p>1.Աշխատակազմում ՀԿՏՀ-ի առկայությունը – առկա է</p> <p>2. ՀԿՏՀ-ում օգտագործվող ծրագրերի թիվը - 2</p> <p>3.Աշխատակազմում կիրառվող հեռահաղորդակցության համակարգերի թիվը -1</p>	<p>Տեղեկատվական աղբյուրներ Աշխատակազմ, ՏՀԶՎԿ ՀԿ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Աշխատակազմի քարտուղար</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան ենթակառուցվածքների, ֆինանսական ռեսուրսների և մասնագետների առկայությունը</p>
---	--	--	------------------------------	--	---

<p>Միջոցառումներ (գործողություններ) .</p> <p>1.Աշխատակազմի աշխատատեղերի վերազինում ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով</p> <p>2.Աշխատակազմի գույքի նորացում</p>	<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</p> <p>1.Աշխատակազմի տեխնիկական սպասարկման անձնակազմի աշխատակիցներ - 2</p>
--	---

<p>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</p>					
<p>Ոլորտային նպատակ. Բարելավել քաղաքաշինության և կոմունալ</p>	<p>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1.Գիշերային լուսավորված փողոցների թվի տեսակարար կշիռն</p>				

<p>ծառայության բնագավառում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցումը և որակը:</p>	<p>ընդհանուրի մեջ - 23 % 2. Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից (հարցումների հիման վրա) - ավելի շատ վատ, քան լավ 3. Խմելու ջրի ջրամատակարարման ծառայության մատուցման մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - միջին՝ ոչ լավ, ոչ վատ</p>
--	---

Օրագիր 1. Թումանյան քաղաքի հրապարակի բարեկարգում և ջրավազանի վերանորոգում
Բնակավայրը՝ Թումանյան

<p>Օրագրի նպատակ. Բարելավել Թումանյան քաղաքի բնակչության, զբոսաշրջիկների հանգստի պայմանները</p>	<p>Օրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ . Թումանյան քաղաքի բնակչության, զբոսաշրջիկների հանգստի պայմանները բարելավվել են, բարեկարգվել է քաղաքի հրապարակը, վերանորոգվել է ջրավազանը – առկա է</p>	<p>Օրագրի գնահատման համակարգ . ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ, «Թումանյան համայնքի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն՝ Բրակնացումը՝ ՀՈԱԿ-ի միջոցով</p>	<p>2018թ. հունիս – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
<p>Միջանկյալ արդյունք 1. Բարելավվել են Թումանյան քաղաքի բնակչության, զբոսաշրջիկների հանգստի պայմանները, բարեկարգվել են քաղաքի հրապարակը, վերանորոգվել է ջրավազանը</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) 1. Հրապարակի բարեկարգման տևողությունը- 2 ամիս 2. Ջրավազանի վերանորոգման տևողությունը- 1 ամիս 3. Բնակիչների կարծիքը բարեկարգված հրապարակի և ջրավազանի վերաբերյալ- բավականին լավ 4. Բարեկարգված հրապարակի և ջրավազանի առկայությունը – առկա է</p>	<p>Տեղեկատվական աղբյուրներ Օրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակություն, բնակիչներ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ, «Թումանյան համայնքի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն</p>	<p>2018թ. հունիս – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկա են եղել</p>

<p>Միջոցառումներ (գործողություններ) 1. Հրապարակի բարեկարգման և ջրավազանի վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրում և նախապատրաստում 2. «Թումանյան համայնքի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ին սուբսիդիայի հատկացում 3. Հրապարակի բարեկարգման և ջրավազանի վերանորոգման աշխատանքների իրականացում և վերահսկում 4. Աշխատանքների կատարման ավարտական ակտի կազմում, քննարկում և հաստատում</p>	<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Համայնքի բյուջեից նախատեսված վերանորոգման ծախսեր՝ 800.0 հազ. դրամ 2. «Թումանյան համայնքի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տեխնիկա և զույք 3. Նախագծա-նախահաշվային փաստաթղթեր՝ 2 Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ</p>
---	---

Օրագիր 2. Համայնքի գյուղական բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի ընթացիկ նորոգում
Բնակավայրերը՝ Աթան, Ահնիձոր, Լորուտ, Մարց, Քարինջ, Շամուտ

<p>Օրագրի նպատակ. Բարելավել խմելու ջրի ջրամատակարարման ծառայության մատուցման մատչելիությունը և</p>	<p>Օրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Խմելու ջրի ջրամատակարարման ծառայության որակից</p>	<p>Օրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ, վարչական ղեկավարներ, «Թումանյան համայնքի</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
--	---	--	--	--	--

որակը համայնքի գյուղական բոլոր բնակավայրերում	բնակիչների բավարարվածության աստիճանը - միջին՝ ոչ լավ, ոչ վատ		կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Իրականացումը՝ ՀՈԱԿ-ի միջոցով		և
Միջանկյալ արդյունք 1. Բարելավվել է խմելու ջրի ջրամատակարարման ծառայության մատուցման մատչելիությունը և որակը համայնքի գյուղական բոլոր բնակավայրերում	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) 1. Վերանորոգված ջրագծերի երկարությունը - 3200 մ 2. Տարվա ընթացքում ջրագծերի ընթացիկ նորոգում իրականացված բնակավայրերի թիվը - 6 3. Ջրագծերի վթարների ընդհանուր թիվը - 43 4. Բնակիչների կարծիքը խմելու ջրի ջրամատակարարման մատչելիությունից - ավելի շատ լավ, քան վատ 5. Ծրագրի իրականացման ժամկետը - 1 տարի	Տեղեկատվական աղբյուրներ Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակություն, բնակիչներ	Համայնքի ղեկավարի տեղակալ, վարչական ղեկավարներ, «Թումանյան համայնքի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Իրականացումը՝ ՀՈԱԿ-ի միջոցով	2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկայությունը
Միջոցառումներ (գործողություններ) 1. Ներքին ջրագծերի ընթացիկ նորոգման աշխատանքների նախահաշվային փաստաթղթերի նախապատրաստում 2. Ջրամատակարարման ներբնակավայրային համակարգերի ընթացիկ նորոգման աշխատանքների իրականացում և վերահսկում 3. Վերանորոգման աշխատանքների կատարման ավարտական ակտի կազմում, քննարկում և հաստատում		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Համայնքի բյուջեով նախատեսված վերանորոգման ծախսեր՝ 1500.0 հազ. դրամ 2. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ՝ 7 3. «Թումանյան համայնքի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տեխնիկա և գույք Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ			
Ծրագիր 3. Թումանյան քաղաքի և Մարցի փողոցների արտաքին լուսավորության համակարգերի ընդլայնում, հենասյուների ներկում					
Բնակավայրերը՝ Թումանյան, Մարց					
Ծրագրի նպատակ. Բարձրացնել Թումանյան քաղաքի և Մարց գյուղի փողոցներով երթևեկության անվտանգության մակարդակը, փողոցները դարձնել լուսավոր, գեղեցիկ ու հարմարավետ համայնքի բնակիչների, հյուրերի, տրանսպորտային միջոցների և զբոսաշրջիկների համար	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1. Թումանյան քաղաքի և Մարց գյուղի փողոցները դարձել են լուսավոր, գեղեցիկ ու հարմարավետ համայնքի բնակիչների, հյուրերի, տրանսպորտային միջոցների և զբոսաշրջիկների համար - 80 %-ով 2. Գիշերային լուսավորված փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ - 26 %	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավարի տեղակալ, Մարց գյուղի վարչական ղեկավար, <<Թումանյանի կոմունալ տնտեսություն>>- ՀՈԱԿ-ի տնօրեն, Իրականացումը՝ ՀՈԱԿ-ի միջոցով	2018թ. հունիս – 2018թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1. Թումանյան քաղաքի և Մարց գյուղի	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1. Փողոցներում տեղադրված	Տեղեկատվական աղբյուրներ. Ծրագրի գնահատման	Համայնքի ղեկավարի տեղակալ, Մարց գյուղի	2018թ. հունիս – 2018թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և

<p>փողոցները դարձել են լուսավոր, գեղեցիկ և բարեկարգ</p>	<p>լուսատուների և հենասյուների քանակը - 5 2.Ներկված հենասյուների թիվը -24 3. Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից - ավելի շատ լավ, քան վատ 4. Ծրագրի իրականացման ժամկետը - 2 ամիս</p>	<p>համակարգ, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, Թումանյան քաղաքի և Մարց գյուղի բնակիչներ</p>	<p>վարչական ղեկավար, <<Թումանյան ի կոմունալ տնտեսություն >>-ՀՈԱԿ-ի տնօրեն</p>		<p>Ֆինանսական ռեսուրսների առկա են եղել</p>
---	--	---	---	--	--

<p>Միջոցառումներ (գործողություններ) 1.Թումանյան քաղաքի և Մարցի փողոցների արտաքին լուսավորության համակարգերի ընդլայնման, հենասյուների ներկման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրում 2.Փողոցների արտաքին լուսավորության համակարգերի ընդլայնման, հենասյուների ներկման աշխատանքների իրականացում և վերահսկում 3.Աշխատանքների կատարման ավարտական ակտերի կազմում,քննարկում և հաստատում</p>	<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1.Համայնքի բյուջով նախատեսված ծախսեր՝ 550.0 հազ. դրամ 2. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ՝ 2 3. «Թումանյան համայնքի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տեխնիկա և գույք 4. Նախագծա-նախահաշվային փաստաթղթեր՝ 2 Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ</p>
--	---

Ոլորտ 6. Տրանսպորտ

<p>Ոլորտային նպատակ . Բարձրացնել համայնքային ենթակայության ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակը և ապահովել ճանապարհային անվտանգ երթևեկությունը:</p>	<p>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1.Համայնքային ենթակայության ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - միջին ոչ լավ, ոչ վատ 2.Ասֆալտապատված ներհամայնքային ճանապարհների և փողոցների մակերեսը՝ 17170քմ</p>
---	--

Ծրագիր 1. Ահնիծորից և Աթանից արոտավայրեր տանող հանդամիջյան ճանապարհների նորոգում Բնակավայրերը՝ Ահնիծոր, Աթան

<p>Ծրագրի նպատակ. 1. Բարեկարգել Ահնիծոր և Աթան գյուղերի արոտավայրեր տանող ճանապարհները, դրանք դարձնել անցանելի գյուղացիների և մեքենաների համար: 2.Անասնապահության զարգացման համար 2 գյուղերում ստեղծել բարենպաստ պայմաններ:</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Ապահովվել է Ահնիծոր և Աթան գյուղերի բնակչությանը անցանելի ճանապարհներով երթևեկելու ծառայության մատուցումը և արոտավայրերի հասանելիությունը - 100 %-ով</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ, Ահնիծոր և Աթան գյուղերի վարչական ղեկավարներ, <<Թումանյանի կոմունալ տնտեսություն>>- ՀՈԱԿ-ի տնօրեն, Իրականացումը ՀՈԱԿ-ի միջոցով</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
<p>Միջանկյալ արդյունքներ. 1. Ահնիծոր և Աթան գյուղերի բնակիչներն առանց խոչընդոտների, ժամանակին օգտվում</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1.Վերանորոգված «Գյազ» կոչվող հանդամաս տանող ճանապարհի երկարությունը -14 կմ</p>	<p>Տեղեկատվական աղբյուրներ. Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՄԳ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ, Ահնիծոր և Աթան գյուղերի վարչական ղեկավարներ,</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>

<p>են հանդամասերից և ճանապարհներին չեն ունենում հավելյալ վառելիքի կորուստ:</p> <p>2. Բնակիչները չեն կատարում մեքենաների և տեխնիկայի անսարքությունների վերացման ավելորդ ծախսեր:</p>	<p>2. Աթան գյուղի արոտավայրեր տանող վերանորոգված հանդամիջյան ճանապարհի երկարությունը - 11 կմ</p> <p>3. Բնակիչների բավարարվածությունը վերանորոգված հանդամիջյան ճանապարհների անցանելիության վիճակից - բավականին լավ</p> <p>4. Ծրագրի իրականացման ժամկետը - 2 ամիս</p>	<p>կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, Ահնիձոր և Աթան գյուղերի բնակիչներ</p>	<p><<Թումանյանի կոմունալ տնտեսություն>> - ՀՈԱԿ-ի տնօրեն</p>		<p>և</p>
---	---	---	---	--	----------

<p>Միջոցառումներ (գործողություններ)</p> <p>1. Կազմել արոտավայրեր տանող ճանապարհների վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:</p> <p>2. Վերահսկել ճանապարհների նորոգման աշխատանքները:</p> <p>3. Աշխատանքների կատարման ավարտական ակտերի կազմում, քննարկում և հաստատում:</p>	<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</p> <p>1. Համայնքի բյուջեով նախատեսված վերանորոգման ծախսեր՝ 500.0 հազ. դրամ</p> <p>2. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ՝ 3</p> <p>3. «Թումանյան համայնքի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տեխնիկա և գույք</p> <p>4. Նախագծա-նախահաշվային փաստաթղթեր՝ 2</p> <p>Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ</p>
--	---

Ծրագիր 2. Թումանյան քաղաքի փողոցների բարեկարգում և ասֆալտապատում Բնակավայրը՝ Թումանյան

<p>Ծրագրի նպատակ. Թումանյան քաղաքի փողոցները բարեկարգել, վերացնել փողոցների ջրափոսերը և դրանք դարձնել անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին:</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Թումանյան քաղաքի փողոցները դարձել են անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին - 100 %</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ, <<Թումանյանի կոմունալ տնտեսություն>>- ՀՈԱԿ-ի տնօրեն</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
--	--	---	---	--	--

<p>Միջանկյալ արդյունք 1. Թումանյան քաղաքի փողոցները դարձել են անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</p> <p>1. Ասֆալտապատված փողոցների մակերեսը - 70 ք.մ</p> <p>2. Բարեկարգված փողոցների երկարությունը - 1900 մ</p> <p>3. Բնակիչների կարծիքը ասֆալտապատված և բարեկարգված փողոցների</p>	<p>Տեղեկատվական աղբյուրներ. Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
---	---	---	----------------------------------	--	--

տարվա բոլոր եղանակներին:	վերաբերյալ - բավականին լավ 4. Ծրագրի իրականացման ժամկետը - 2 ամիս				
Միջոցառումներ (գործողություններ) 1. Պատվիրել քաղաքի փողոցների բարեկարգման և ասֆալտապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը; 2. Կազմակերպել մրցույթ; 3. Կնքել պայմանագիր մրցույթում հաղթող շինարարական կազմակերպության հետ; 4. Վերահսկել շինարարական աշխատանքները; 5. Կազմել, քննարկել և հաստատել աշխատանքների կատարման ավարտական ակտը:		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ՝ 2 2. Նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ 2 3. Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր՝ 1300.0 հազ. դրամ, Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ			
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ					
Ոլորտային նպատակ. Խթանել համայնքում գործարար միջավայրի բարելավումը և զարգացումը		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Համայնքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների (ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների) թիվը՝ 23			
Ծրագիր 1. Թումանյան քաղաքում կանգառ-շուկայի կառուցում Բնակավայրը՝ Թումանյան					
Ծրագրի նպատակ. Խթանել համայնքում գործարար միջավայրի բարելավումը ու զարգացումը	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Կանգառ-շուկան կառուցվել է, համայնքի բնակչությունը հնարավորություն ունի իրացնելու արտադրված գյուղմթերքները - այո	Ծրագրի գնահատման համակարգ. ԱՄԶԳ /USAID/, ՀՏԶՀ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, ԱՄԶԳ-ի /USAID/ և ՏԶՀ-ի ներկայացուցիչներ	2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1. Կանգառ-շուկան կառուցվել է	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) 1. Կանգառ-շուկայի տաղավարների թիվը -14 2. Կանգառ-շուկայում սանհանգուցի առկայությունը – առկա է 3. Կանգառ-շուկայում լուսավորության համակարգի առկայությունը –առկա է 4. Կանգառ-շուկայում առևտրով զբաղվող համայնքի բնակիչների թիվը - 32 5. Բնակիչների կարծիքը կանգառ-շուկայի ծառայության վերաբերյալ - կատարյալ 6. Ծրագրի իրականացման ժամկետը - 1 տարի	Տեղեկատվական աղբյուրներ Աշխատակազմ, ԱՄԶԳ-ի /USAID/ և ՏԶՀ-ի ներկայացուցիչներ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ	Համայնքի ղեկավար, համայնքի ղեկավարի տեղակալ	2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջոցառումներ (գործողություններ) . 1. ՀՏԶՀ-ի հետ միասին պատվիրել կանգառ-շուկայի		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. ԱՄԶԳ /USAID/ և ՀՏԶՀ-ի կողմից ներդրում՝ 23000.0 հազ. դրամ			

<p>կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը</p> <p>2. ՀՏՁՀ-ի հետ միասին կազմակերպել և անցկացնել շինարարական կազմակերպության ընտրության մրցույթը</p> <p>3. Կնքել պայմանագիր հաղթող շինարարական կազմակերպության հետ և իրականացնել ծրագրով նախատեսված աշխատանքները</p> <p>4. Վերահսկել շինարարական աշխատանքների կատարման ընթացքը</p> <p>5. Համայնքի ավագանու որոշմամբ սահմանել շուկայում ծառայությունների մատուցման սակագները</p>	<p>2. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ՝ 2</p> <p>3. Համայնքի կողմից հողատարածքի հատկացում – իրականացվել է Ֆինանսավորման աղբյուրը՝ ԱՄՁԳ /USAID/ և ՀՏՁՀ</p>
--	--

Ոլորտ 8. Կրթություն

<p>Ոլորտային նպատակ. Բարձրացնել համայնքում կրթության որակը և մատչելիությունը:</p>	<p>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. ՏԻՄ-երի, կրթական հաստատությունների գործունեությունից, մատուցված ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - լավ</p>
--	--

Ծրագիր 1. Համայնքում նախադպրոցական կրթության ապահովում և ընդլայնում Բնակավայրերը՝ Թումանյան, Լորուտ, Քարինջ, Աթան, Ահնիձոր, Մարց, Շամուտ

<p>Ծրագրի նպատակ. Իրականացնել համայնքի բնակչությանը նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցումը և հասանելիությունը</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Ապահովվել է համայնքի բնակչությանը նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցումը և հասանելիությունը - շատ լավ</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, համայնքի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների տնօրեններ, վարչական ղեկավարներ Իրականացումը՝ ՀՈԱԿ-ների միջոցով</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
<p>Միջանկյալ արդյունք 1. Ապահովվել է համայնքի «ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ների բնականոն գործունեությունը</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1. ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների թիվը՝ 3 2. ՆՈՒՀ ՀՈԱԿ-ներ հաճախող երեխաների թիվը -121 3. ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների դաստիարակների թիվը -14 4. ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների խմբերի թիվը -8 5. Մեկ երեխայի հաշվով սննդի օրական ծախսերը - 170 դրամ 6. Մատուցված ծառայության համապատասխանությունը օրենսդրական պահանջներին, սահմանված նորմատիվներին, կարգերին և չափորոշիչներին - ամբողջությամբ 7. Նախադպրոցական կրթության ծառայության մատուցման օրերի թիվը</p>	<p>Տեղեկատվական աղբյուրներ Համայնքի ղեկավար, վարչական ղեկավարներ, համայնքի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների տնօրեններ, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ, բնակիչներ (ծնողներ)</p>	<p>Համայնքի ղեկավար, համայնքի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների տնօրեններ, վարչական ղեկավարներ</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>

	<p>տարվա ընթացքում - 229 8. Ծնողների բավարարվածության աստիճանը մատուցված ծառայությունների որակից - շատ լավ 9. Ծրագրի իրականացման ժամկետը 1 տարի</p>				
--	---	--	--	--	--

Միջոցառումներ (գործողություններ).

1. ՀՈԱԿ-ների աշխատակազմերի պահպանություն
2. ՀՈԱԿ-ների շենքերի և գույքի ընթացիկ նորոգում
3. Ծնողական վճարի չափի մասին ավագանու որոշման
ընդունում
4. Մանկապարտեզների խմբերի կոմպլեկտավորում
5. Գործող օրենսդրական պահանջներին, սահմանված
նորմատիվներին, կարգերին և չափորոշիչներին
ՀՈԱԿ-ների գործունեության
համապատասխանության վերաբերյալ
ուսումնասիրությունների իրականացում

Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).

1. ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների աշխատակազմերի աշխատակիցներ՝ 29
2. ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների շենքեր և գույք
3. Համայնքի բյուջեով նախատեսված ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների
պահպանման ծախսեր՝ **22500.0** հազ. դրամ,
Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ

**Ծրագիր 2. Քարինջի մանկապարտեզի շենքի ջեռուցման համակարգի անցկացում
Բնակավայրը՝ Քարինջ**

<p>Ծրագրի նպատակ. Բարելավել Քարինջի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի կողմից ծառայությունների մատուցման պայմանները</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Ապահովվել է Քարինջ գյուղի բնակչությանը նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցման որակը - լավ</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ կլիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, Քարինջի վարչական ղեկավար, Քարինջի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի տնօրեն</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարությու ն</p>
---	--	--	---	--	---

<p>Միջանկյալ արդյունք 1. Բարելավվել են Քարինջի ՆՈՒՀ ՀՈԱԿ- ի նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցման պայմանները</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</p> <ol style="list-style-type: none"> 1. ՆՈՒՀ ՀՈԱԿ հաճախող երեխաների թիվը -24 2. ՆՈՒՀ ՀՈԱԿ հաճախող երեխաների աճը - 2%-ով 3. Մեկ երեխայի հաշվով ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի պահպանման փաստացի ծախսերի գումարը -28500 դրամ 4. Ծնողների կարծիքը մատուցված ծառայությունների վերաբերյալ - լավ 5. Ծրագրի իրականացման ժամկետը 1 տարի 	<p>Տեղեկատվական աղբյուրներ Համայնքի ղեկավար, Քարինջի վարչական ղեկավար, Քարինջի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի տնօրեն, աշխատակազմ, ՄԳ կլիսամյակային և տարեկան հաշվետվություններ, բնակիչներ (ծնողներ)</p>	<p>Համայնքի ղեկավար, Քարինջի վարչական ղեկավար, Քարինջի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի տնօրեն</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարությու ն</p>
--	--	---	---	--	---

Միջոցառումներ (գործողություններ).
Քարինջի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի վերանորոգման
աշխատանքների նախագծա-նախահաշվային
փաստաթղթերի պատվիրում
Վերանորոգման աշխատանքների իրականացման
շինարարական կազմակերպության ընտրության

Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).

1. ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի աշխատակազմ՝ 8
2. Նախագծային և նախահաշվային փաստաթղթեր՝ 1
3. Համայնքի բյուջեով նախատեսված ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի ջեռուցման
համակարգի անցկացման ծախսեր՝ **2500,0** հազ.դրամ,
Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ

մրցույթի անցկացում և հաղթող կազմակերպության հետ պայմանագրի կնքում
 Վերանորոգման աշխատանքների իրականացում և վերահսկում
 Աշխատանքների կատարման հանձնման-ընդունման ավարտական ակտի կազմում, քննարկում և հաստատում

Ծրագիր 3. Համայնքում արտադարձական դաստիարակության ծառայության մատուցում
Բնակավայրը՝ Թումանյան

